



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/130/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

26 մայիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Լիլիթ Ալեքսանյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարությանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մայիսի 26-ին քննելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Աննա Կարենի Խաչատրյանի կողմից պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/130/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ Աննա Խաչատրյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է վերջինիս գույքային դրությունը, այդ թվում նաև նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացվել է հայտարարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում արձանագրվել է հետևյալը՝

1) Աննա Խաչատրյանը Հայտարարգրում փաստացի տիրապետվող անշարժ գույքի վերաբերյալ տվյալներ չի ներկայացրել, մինչդեռ Կադաստրի կոմիտեից վերջինիս սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի՝ բնակելի տան կամ բնակարանի վերաբերյալ տեղեկություններ չեն ստացվել:

2) ԿԲ-ից ստացված տվյալների համաձայն՝ Աննա Խաչատրյանի բանկային հաշվի մնացորդը 2023 թվականի տարեսկզբին կազմել է 358,736 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 928,384 ՀՀ դրամ, մինչդեռ վերջինս 2023 թվականի տարեսկզբին հայտարարագրել է 900,000 ՀՀ դրամ բանկային հաշվի մնացորդ, իսկ տարեվերջին՝ 1,200,000 ՀՀ դրամ բանկային հաշվի մնացորդ:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մայիսի 6-ին Աննա Խաչատրյանին հասցեագրել է թիվ 01/1879-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 15:00-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 15:00-ին գործի քննությանը մասնակցելուն, որի վերաբերյալ Աննա Խաչատրյանը պատշաճ ծանուցվել է:

1.3 Պատշաճ ծանուցված Աննա Խաչատրյանի բացակայությամբ 2025 թվականի մայիսի 16-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ /83/25

արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 2025 թվականի մայիսի 20-ին Հանձնաժողովում ստացվել է Աննա Խաչատրյանի միջնորդությունը՝ նույն օրը նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ: Հանձնաժողովը բավարարել է միջնորդությունը և գործի քննությունը նշանակել է 2025 թվականի մայիսի 26-ին::

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Աննա Խաչատրյանի ներկայությամբ 2025 թվականի մայիսի 26-ին, ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

2. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից Աննա Խաչատրյանը գործի քննության ընթացքում հայտնել է, որ ՀՀ, քաղաք Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Շարուրի փողոց, շենք 24, բնակարան 11 հասցեում գտնվող գույքը պատկանում է իր հորը՝ Կարեն Վաչիկի Խաչատրյանին, և ինքը չի իմացել, որ 90 և ավել օր բնակվելու դեպքում տվյալ անշարժ գույքը ենթակա է եղել հայտարարագրման որպես իր կողմից փաստացի տիրապետվող անշարժ գույք: Անդրադառնալով բանկային հաշվի մնացորդներին Աննա Խաչատրյանը հայտնել է, որ ինքը հայտարարագիրը լրացնելիս չի օգտվել բանկային քաղվածքներից, ուստի այդ պահին իր հիշած տվյալներով է լրացրել դրանք: Քանի որ հայտարարագիրը լրացրել է տարվա կեսերին և հունվար ամսից անցած է եղել երկար ժամանակ հայտարարագիրը ներկայացնելիս հիմք է ընդունել այն, որ ամեն տարվա դեկտեմբեր ամսին աշխատավարձը, 13-րդ աշխատավարձը, պարգևավճարները, երբ ստացվում են կազմում են մոտավորապես 1,200,000 ՀՀ դրամ և այդ պատճառով էլ այդքանը նշել է հայտարարագրում:

3. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/130/25 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Աննա Կարենի Խաչատրյանը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ:

3.2 Հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները» բաժնում Աննա Խաչատրյանը որպես իր բնակության և հաշվառման հասցե նշել է ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Շարուրի փողոց, շենք 24, 11 բնակարանը:

3.3 Հայտարարագրի «Բ.1.4 Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում Աննա Խաչատրյանը չի նշել որևէ անշարժ գույք, մինչդեռ նա 2023 թվականի ընթացքում 90 օրից ավելի բնակվել է ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Շարուրի փողոց, շենք 24, բնակարան 11 հասցեում:

3.4 ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Շարուրի փողոց, շենք 24, բնակարան 11 հասցեում գտվող անշարժ գույքը Աննա Խաչատրյանի կողմից ներկայացված սեփականության իրավունքով պատկանում է վերջինիս հորը՝ Կարեն Վաչիկի Խաչատրյանին:

3.5 Հայտարարագրի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդներ «բացառությամբ ավանդների»» բաժնում Աննա Խաչատրյանը 2023 թվականի տարեսկզբին հայտարարագրել է 900,000 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 1,200,000 ՀՀ դրամ բանկային հաշվի մնացորդ, մինչդեռ ԿԲ-ից ստացված և վարույթի մասնակցի կողմից ներկայացված բանկային հաշիվների քաղվածքների տվյալների համաձայն՝

պաշտոնատար անձի բանկային հաշվի մնացորդը 2023 թվականի տարեսկզբին կազմել է 358,736 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 928,384 ՀՀ դրամ:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական(...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

Նույն հոդվածի 1.1-ին մասի համաձայն Հայտարարագրում ներառվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը, ինչպես նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն:

Նույն հոդվածի 1.2 մասի համաձայն՝ փաստացի տիրապետվող գույք է համարվում հայտարարատուին սեփականության իրավունքով չպատկանող, բայց նրա կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող կամ օգտագործվող (անկախ նշված իրավունքների պետական գրանցումից) անշարժ գույքը, տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված անշարժ գույքի, տրանսպորտի միջոցի), թանկարժեք գույքը:

4.3 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է

հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Աննա

Կարենի Խաչատրյան Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, 2024 թվականի մայիսի 31-ին Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, այն է՝

1) Հայտարարագրի «Բ.1.4 Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում չի նշվել որևէ գույք, մինչդեռ նա 2023 թվականի ընթացքում 90 օրից ավելի բնակվել է ՀՀ, քաղաք Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Շարուրի փողոց, շենք 24, բնակարան 11 հասցեում:

2) Հայտարարագրի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդներ «բացառությամբ ավանդների»» բաժնում 2023 թվականի տարեսկզբին հայտարարագրվել է 900,000 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 1,200,000 ՀՀ դրամ բանկային հաշվի մնացորդ, մինչդեռ ԿԲ-ից ստացված տվյալների համաձայն՝ բանկային հաշվի մնացորդը 2023 թվականի տարեսկզբին կազմել է 358,736 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 928,384 ՀՀ դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս

անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

1-ին կետում նշված խախտման կապակցությամբ Հանձնաժողովը արձանագրում է, որ Աննա Խաչատրյանը Հայտարարագրի «Բ.1.4 Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում ՀՀ քաղաք Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Շարուրի փողոց, շենք 24, բնակարան 11 հասցեում գտնվող բնակարանը չհայտարարագրելով թույլ է տվել Օրենսգիրք 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք: Այդուհանդերձ, նկատի ունենալով այն, որ այդ անշարժ գույքը Հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները» բաժնում որպես **իր բնակության և հաշվառման հասցե հայտարարագրելով** Աննա Խաչատրյանը փաստացի բացահայտել է երրորդ անձի՝ **հորը սեփականության իրավունքով պատկանող** գույքի իր կողմից փաստացի տիրապետումը, դրանով ապահովվել է պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության հնարավորությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը, հետևաբար Աննա Խաչատրյանի կողմից թույլ տրված իրավախախտումն ունի նվազ նշանակություն: Տվյալ դեպքում Հանձնաժողովը կարևոր է համարում այն, որ տվյալ անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանել է հայտարարատու անձի հորը և այն հայտարարագրվել է որպես հայտարարատու անձի բնակության և հաշվառման հասցե, քանի որ Հանձնաժողովն իր նախորդող որոշումներով նման դեպքերը նվազ նշանակության է գնահատել (տես ՎԻՎ/101/2025 գործը):

2-րդ կետում նշված անհամապատասխանությունների առնչությամբ Հանձնաժողովը արձանագրում է, որ վարույթի ընթացքում հաստատված փաստական տվյալների համաձայն՝ ԿԲ-ից ստացված և պաշտոնատար անձի հայտարարագրած բանկային հաշվի մնացորդների վերաբերյալ տվյալների տարբերությունը՝ տարեսկզբին 541,264 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 271,616 ՀՀ դրամ, չեն գերազանցում վերջինիս դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը, որը կազմել է մոտավորապես 648,000 ՀՀ դրամ: Հաշվի առնելով վերոգրյալը Հանձնաժողովը գտնում է, որ Աննա Խաչատրյանի կողմից թույլ տրված այս իրավախախտումը ևս ունի նվազ նշանակություն, քանի որ Հանձնաժողովի կողմից կայացված նախորդ որոշումներով բանկային հաշվի մնացորդների սխալ կամ ոչ ամբողջական հայտարարագրման հետ կապված նվազ նշանակություն են գնահատվել այն դեպքերը, երբ չհայտարարագրված գումարի չափը չի գերազանցել հայտարարատու անձի դրույքաչափի համար սահմանված աշխատավարձի զուտ չափը (տես ՎԻՎ/08/2021, ՎԻՎ/09/2021 գործերը):

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Աննա Կարենի Խաչատրյանի կողմից կատարված խախտումները հանրային վտանգավորության տեսակետից ունեն նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Աննա Կարենի Խաչատրյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աննա Կարենի Խաչատրյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Աննա Կարենի Խաչատրյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆԱՅԱՆ